ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19 սեպտեմբերի 2014 թվականի N 126-Ա

Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ ***Հովհաննես Կուրանյանին*** 2014 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ, տաս օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 1080-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

2. ***Հովհաննես Կուրանյանի*** վերապատրաստման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ ***Կարեն Հունանյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2014 թվականի սեպտեմբերի 19
ք. Հրազդան